Արձանագրություն N 2

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ **Շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** թիվ ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստի

ք. Երևան «2» «հոկտեմբերի» 2019թ.

Սույն թվականի **սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը** Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գրասենյակում տեղի է ունեցել ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը նախագահում էր Սամվել Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին
2. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին
3. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին
4. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին

Հանձնաժողովի նախագահ Սամվել Առաքելյանը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն կից ներկայացված ֆայլի:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին:
- Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
- Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
- ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Մասնակիցների անվանումները	էլ.փոստ
Շինկենտրոն ՓԲԸ	shinkentron@gmail.com
Ալտերնատիվ ՍՊԸ	gasparann@yahoo.com
ԻՐՏԻԳ ՍՊԸ	irtig@inbox.ru
ԳՐԻՏԻԳ ՍՊԸ	gritig@inbox.ru
ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ	goldnetltd@mail.ru

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
- Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված էին հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝
    - Շինկենտրոն ՓԲԸ-ի, Ալտերնատիվ ՍՊԸ-ի և ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ -ի, ում կողմից ներկայացված հայտերում սխալ է նշված գնման առարկայի անվանումը:

Որոշվեց՝

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, բացառությամբ՝ Շինկենտրոն ՓԲԸ-ի, Ալտերնատիվ ՍՊԸ-ի և ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի:
2. Շինկենտրոն ՓԲԸ-ի, Ալտերնատիվ ՍՊԸ-ի և ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը՝ որը ներկայացված է կից ֆայլով:

4. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին

Հաշվի առնելով այն, որ ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13 ծածկագրով ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի հիման վրա, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով՝

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել:
2. Բավարար գնահատված մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին:
3. Բանակցություններն անցկացնել 2019 թվականի **հոկտեմբերի 2-ին, ժամը՝ 11:00**-ին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձաժողովն արձանագրեց, որ բավարար գնահատված մասնակիցներից ոչ մեկը բանակցություններին չի ներկայացել:

Որոշվեց՝

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատել ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը՝ համաձայն կից ներկայացված ֆայլի:
5. «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ ընթացակարգի **1-5-րդ չափաբաժինների մասով՝ «ԻՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին:**
6. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13» ծածկագրով ընթացակարգի **առաջին տեղ զբաղեցած մասնակցի** մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:
7. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ **1-ին տեղ զբաղեցրած մասնակցին** ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ a.bazeyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

1. «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/13» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին

տրամադրման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին, ՀՏԶՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Սամվել Առաքելյան

անդամներ՝
Վահագն Պապիկյան

Էդուարդ Ջանջուղազյան

Արթուր Սողոմոնյան

Արեգ Եղիյան

քարտուղար՝
Անի Բազեյան